ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(Մատթ. ԺԷ 1-13, Մարկ. Թ 1-12, Ղուկ. Թ 28-36)

Հիսուսի Այլակերպությունը մեր Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է: Այն կատարվում է Զատիկից 14 կամ Հոգեգալուստից 7 շաբաթ անց հանդիպող առաջին կիրակի օրը, այսինքն՝ ունի 35 օրվա շարժականություն և տոնվում է հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Տոնվում է երեք օր: Տոնի առաջին օրվա շարականն ավանդաբար վերագրվում է ս. Մովսես Խորենացուն, իսկ ասվող աղոթքը՝ ս. Եղիշեին:

Տոնը հայտնի է դեռևս Դ դարից: Եկեղեցու ավանդությունը պայծառակերպության վայր է համարում Թաբոր լեռը, որն էլ առիթ դարձավ, որ Կոստանդին Մեծ կայսեր մայրը՝ Հեղինեն, Թաբոր լեռան վրա կառուցի եկեղեցի՝ ի հիշատակ Տիրոջ պայծառակերպվելու:

Այլակերպությունը գալիք՝ հավիտենական կյանքի, այսինքն՝ 8-րդ անվախճան օրվա պատկերն է, որ կատարվելու է հանդերձյալում, իսկ սկզբնավորվելու է Վերջին (Ահեղ) դատաստանի ատյանից: Այն նաև աստվածտեսության, Անեղ Լույսի ճառագման ու ադամական հանդերձի նորոգության տոնն է: Աստվածտեսության, քանզի Տերը շնորհեց Իր աշակերտներին տեսնել Իր Աստվածությունը: Անեղ Լույսի ճառագման, քանզի Տերը շնորհեց Իր աշակերտներին տեսնել Իր լուսավոր դեմքը: Պայծառակերպության օրը Երկրորդ Ադամը՝ մեր Տերը, դրախտում հագավ մեր նախահոր կողոպտված պատմուճանն ու դրանով զգեստավորեց մեր բնությունը, որը, սակայն, այսօր մենք դեռևս չենք ընդունել, այլ թողնված է ապագային: Այդ լուսավոր պատմուճանով հանդերձյալում ենք զգեստավորվելու, իսկ այստեղ ստանում ենք միայն փրկության հույսի առհավատչյան: Եվ ինչպես Հին Ուխտում տոները տոնվում էին նորի խորհրդով՝ ապագայում կատարվելիք իրադարձությունների դիմաց, այնպես էլ մենք այս տոնով վկայակոչում ենք հանդերձյալի հիշատակը:

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՌՁԵՎ

Փիլիպպյան Կեսարիա քաղաքի մոտ, առաքյալների հետ ունեցած խոսակցությունից հետո, որտեղ Պետրոսը խոստովանեց Տիրոջը. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (Մատթ. ԺԶ 16), Հիսուս թողեց այդ կողմերը և եկած ճանապարհով վերադարձավ Բեթսայիդա, ապա այնտեղից ուղևորվեց դեպի Թաբոր լեռ:

Օրը երեկոյանում էր, երբ Մարդու Որդին, իր հետ վերցնելով Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին,

բարձրացավ լեռը, այն ժամանակ, երբ մյուսները հանգստանում էին ստորոտում: Մինչ Նա աղոթում էր, աշակերտները Նրա կողքին տեղավորվեցին, և նիրհը թմրության նման շղարշեց նրանց: Երբ արթնացան, նրանց ապշեցրեց Վարդապետի հետ կատարված փոփոխությունը: Աղոթքի ժամանակ Տիրոջ դեմքից երկնային լույս էր ճառագում: Հիսուսի հագուստն անգամ դարձել էր շլացուցիչ սպիտակ:

Երկու այրեր զրուցում էին Նրա հետ: Առաքյալները տեսան, որ մեծ մարգարեները՝ Մովսեսն ու Եղիան են հայտնվել լեռան վրա: Փառքի Տերը Մովսեսին մեռելներից, իսկ Եղային ողջերից էր կանչել, որպեսզի արքայության որդիները գիտակցեն, որ Ինքն է մեռելներին հարություն տվողն ու ողջերին ստեղծողը, այսինքն՝ իշխանություն ունի կյանքի և մահվան վրա:

Ահավոր տեսիլքից ծնվող սարսափը փոխվեց խաղաղության և երջանկության, Աստծո մոտ լինելու զգացողության, քանզի այնտեղ ներկա էր միասնական Երրորդությունը. Հայրը՝ երկնային ձայնով, Որդին՝ պայծառակերպված, և Սուրբ Հոգին՝ ամպով Նրանց վրա հովանի եղած: Քանզի Աստված ինչ-որ վայրում չի լինում, Նա ամենուր է, սակայն երևաց մարմնավորներին Թաբոր լեռան վրա: Եվ այն տեղը, ուր Աստված հայտնվեց, առանց վարանելու կարելի է արքայություն

կոչել, քանի որ արքայությունը հենց այն է, ուր Աստվածությունն է երևում:

Սակայն երբ աշակերտները տեսան, որ այդ երկուսը հեռանում են, դողդողացին՝ վախենալով կորցնել այդ բոպեի անարտահայտելի երանությունը, և նաև հասկացան, թե ինչ փորձություններ են սպասվում առջևում, որովհետև հայտնապես լսում էին, թե ինչպես «Մովսեսն ու Եղիան, փառքով երևալով, խոսում էին Նրա վախճանի մասին, որ տեղի պիտի ունենար Երուսաղեմում» (Ղուկ. Թ 31):

Իսկ Պետրոսն այսպես խոսեց. «Ռաբբի՛, լավ է, որ մենք այստեղ ենք, և երեք տաղավարներ շինենք, մեկը՝ Քեզ, մեկը՝ Մովսեսի և մեկը՝ Եղիայի համար» (Ղուկ. Թ 33, Մարկ Թ 4):

Եվ մինչ Պետրոսը խոսում էր, «ահա մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ. ամպից մի ձայն եկավ, որն ասում էր.

«Դա է Իմ սիրելի Որդին, Ում հավանեցի, դրա՛ն լսեք»: Երբ աշակերտները սա լսեցին, երեսի վրա ընկան և սաստիկ վախեցան: Եվ Հիսուս մոտենալով դիպավ նրանց ու ասաց. «Ոտքի՛ ելեք և մի՛ վախեցեք»: Նրանք աչքերը բարձրացրին և Հիսուսից բացի ոչ ոքի չտեսան» (Մատթ. ԺԷ 5-8):

Աստված հայտնվեց Թաբոր լեռան վրա, բայց այդ

ժամանակ աշակերտներից ոչ ոք պարզորոշ չգիտակցեց, որ Նա է մշտնջենավոր Աստված և Փառքի Տերը, Լուսավոր Ամպը, որ իրենք արժանացել էին աստվածտեսության խորհրդին:

Միայն հետագայում էր, որ Պետրոսը պիտի հասկանար ու բացահայտեր սուրբ լեռան գաղտնիքը:

«Ոչ թե հնարովի առասպելների հետևից գնալով է, որ ձեզ ճանաչեցրինք մեր Տեր Հիսուս Քրիստոսի զորությունը և գալուստը, այլ մենք իսկ ականատես եղանք Նրա մեծությանը. քանի որ Նա Հայր Աստծուց ստացավ փառք և պատիվ...

Եվ երկնքից եկող ձայնը լսեցինք մենք իսկ, որ նրա հետ էինք սուրբ լեռան վրա» (Բ Պետ. Ա 16-18):

Քո պայծառակերպության մեջ մենք պիտի վայելենք Քո գիտությունը, պիտի «ճաշակենք ու տեսնենք, որ քաղցր ես Դու» (հմմտ. Սղմ. ԼԳ 9): Մենք շարունակ ավելին պիտի իմանանք Քո Սիրո մասին, բայց երբեք չենք կարող ըմբռնել ամբողջը:

ՎԱՐԴԱՎԱՌ

Հայերի մեջ Պայծառակերպությունը ժողովրդական լեզվով անվանվում է նաև Վարդավառ՝ Տիրոջը վարդի հետ համեմատելու պատճառով: Այս զուգահեռը հետևյալ իմաստներն ունի.

Ինչպես վարդը կոկոնի մեջ է ծածկված լինում նախքան բացվելը, նույնպես և Տերը նախքան պայծառակերպվելը իր մեջ ուներ Աստվածության պայծառությունը, և ինչպես վարդը բացվելով ամենքին հայտնապես երևում է, այդպես էլ մեր Տերը պայծառակերպվելով հայտնում է Իր Աստվածությունը:

Ինչպես վարդը փշերի մեջ է բուսնում, այնպես էլ մեր Տերը հրեաների մեջ երևաց, ովքեր էլ խաչեցին Նրան:

Վարդն անուշահոտություն է բուրում, այդպես էլ մեր Տիրոջ պայծառակերպությունից անուշահոտություն բուրեց, որից աշակերտները թմրելով ընկան քնի ծանրության տակ:

Վարդը քանի դեռ կոկոն է, ո՛չ իր գեղեցկությունը և ո՛չ էլ իր անուշահոտությունը հայտնում, իսկ ժամանակի լրանալուն պես փթթում է և իր գույնով ու անուշահոտությամբ մարդկանց ուրախացնում: Այսպես էլ Քրիստոս կուսական արգանդում սնվեց ու զարգացավ որպես կոկոն և ապա ծնվելով՝ աստղի ու հրեշտակ-

ների ավետիսով հայտնվեց մոգերին ու հովիվներին, իսկ հասնելով կատարյալ հասակին՝ նշաններով ու սքանչելիքներով հայտնվեց բոլորին:

Տիրոջ Պայծառակերպության տոնին միմյանց վրա ջուր լցնելու ժողովրդական սովորության վերաբերյալ կա մի հին ավանդություն, որ թերևս սկզբնավորվել է ջրհեղեղը վերապրած մարդկության միջավայրում:

Համաձայն այս ավանդության՝ ջրի անզորությունը շեշտելու և Արարչի պատիվն արարածին չվերագրելու համար նախաջրհեղեղյան ժամանակաշրջանի սերունդները, ի վկայություն Աստծո նկատմամբ ունեցած իրենց հավատարմության, հաստատեցին այս սովորությունը՝ իրենց սրտում ամրագրելով Տիրոջ այն խոսքը, որ ասում է.

«Ես եմ քո Տեր Աստվածը...
և Ինձանից բացի այլ աստվածներ
չպիտի լինեն քեզ համար»

(Ելք Ի 2-3):